Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-ր, 362-րդ հոդվածներով

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ պատասխանող ՀՀ Ներքին գործերի նախարարության, բավարարել մասնակի՝

1.1. ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի 19.07.2024թ.-ի թիվ 13/546 ծանուցմամբ կայացված՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումն անվավեր ճանաչելու պահանջը մերժել.

1.2. ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի 30.07.2024թ. կայացված՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջը բավարարել. անվավեր ճանաչել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի 30.07.2024թ. որոշումը:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Դատարանի 02.08.2024թ.-ին որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև սույն վճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Միսեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am